ԸՆԴԴԵՄ ԿԵՂԾԻՔԻ

ՉՔՄԵՂԱՑՈՂ ԱՆՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Ղարաբաղյան հարցը և Սումգայիթի ոճրագործության քաղաքական գնահատականի խնդիրը, ինչպես շեշտեց Ս. Գ. Հարությունյանը համագումարում ունեցած ելույթում, ահա արդեն մեկուկես տարի է, ինչ ցնցում են մեր հանրապետությունը, մեր ամբողջ ռեգիոնը և արձագանք առաջացնում ամբողջ երկրում։ ԼՂԻՄ-ի հարցը և սումգայիթյան ողբերգության քաղաքական գնահատականի խնդիրը (ինչպես ապացուցում են Ֆերգանայում տեղի ունեցող արյունալի միջադեպերը) վաղուց դադարել են ռեգիոնալ հարցեր լինելուց։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ դրանց արդարացի լուծումը թույլ կտա գտնել ազգամիջյան հարաբերությունների պրոբլեմները վճռելու բանալին ու կանխել ցեղասպանության (դժբախտաբար Ֆերգանայի պարագայում նույնպես պաշտոնապես իբրև խուլիգանական արարքներ գնահատվող) գործողությունները։ Այլապես կգտնվեն մարդիկ, ովքեր սումգայիթյան արյան բաղնիքից հետո ամոթից գլուխը կախելու փոխարեն, մեղմ ասած, չքմեղացող անպարկեշտությամբ, իրականում ամբարտավանորեն կփորձեն հանդես գալ մեղադրողի կամ առնվազն հայցվորի դերում, ինչպես Ադրբեջանից դեպուտատ Ա. Նամազովան, որը «Բակինսկի ռաբոչիի» հատուկ թղթակից Վ. Ռուստամովի հետ ունեցած հարցազրույցում, ակնարկելով վթարը Բաշկիրիայում, ասում է. «Բոլոր խորհրդային մարդկանց համար, առանց բացառության, վշտալի ժամին (ի դեպ, մոտավորապես այդպես էր Հայաստանում երկրաշարժի ժամանակ) դեպուտատը ԼՂԻՄ-ից (նկատի ունի Բ. Դադամյանին— Հ. Հ.), իսկ նրանից առաջ Հայաստանի դեպուտատները համագումարի ամբիոնից իրենց [illegible], իսկ երբեմն էլ երեսպաշտ հայտարարություններով փորձում են էժան հեղինակություն շահել էքստրեմիստաբեն տրամադրված տարրերի շրջանում»։ Այնուհետև Նամազովան ավելացնում է, թե իբր քննադատելով Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը, ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն, Ադրբեջանի մինիստրություններն ու գերատեսչությունները, նրանք ԽՍՀՄ դեպուտատների վրա ճնշում գործադրելու, հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև երկպառակություն ու անվստահություն սերմանելու հերթական փորձ են արել։

Եվ դա այն դեպքում, երբ Ղարաբաղի և Սումգայիթի թեման հնչեց համագումարում միայն ռեպլիկների ու հարցադրումների ձևով։ Առավել ամբողջական այն իր արտացոլումը գտավ Ս. Գ. Հարությունյանի ելույթում։

Լեռնային Ղարաբաղի և սումգայիթյան ողբերգության հարցերը հակիրճ արտացոլում գտան նաև Վ. Հ. Համբարձումյանի ելույթում և, վերջապես, առավել հանգամանորեն և հիմնավորված՝ Ստեփանակերտից ժողովրդական դեպուտատ Բ. Վ. Դադամյանի փայլուն ճառում։

Եվ, այնուամենայնիվ, երկու հարցերն էլ գործնական քննարկման առարկա չդարձան համագումարում, դրանց կապակցությամբ հանձնաժողովներ չստեղծվեցին, թեև Բ. Վ. Դադամյանի՝ համագումարին հանձնած Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի պահանջագրում առաջարկվում է ստեղծել Գերագույն խորհրդի հանձնաժողով ԼՂԻՄ-ի Հայաստանին վերամիավորելու ընթացակարգի կանոնարկման համար և մարզում անցկացնել հանրաքվե։ Մինչև իսկ հայ դեպուտատների ելույթներում Սումգայիթի առթիվ թույլ հնչեց «ցեղասպանություն» բառը, թեև կարելի էր ապացուցել, որ Սումգայիթը ցեղասպանություն էր՝ հենվելով ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի՝ «Ցեղասպանության ոճիրը կանխարգելելու և դրա համար պատժելու» վերաբերյալ կոնվենցիայի 2-րդ հոդվածի և նրա հինգ կետերից առաջին երեքի վրա, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցված ճանաչվում է իբրև ցեղասպանության գործողություն։ Մենք արդեն առիթ ունեցել ենք ապացուցելու «Ջգրված ճշմարտություններ» հոդվածում («Երեկոյան Երևան», 2 նոյեմբերի 1988 թ.), որ Սումգայիթում կազմակերպված հայոց ջարդը լիովին համապատասխանում է այդ երեք կետերում նշված հանցագործություններին։

Սումգայիթի ոճիրը խնամքով շրջանցեցին ադրբեջանցի դեպուտատներն իրենց ելույթներում։ Միաժամանակ Բաքվից դեպուտատ Լ. Բարուչևայի և մյուսների ելույթներում հնչում էին դեպուտատներին աչարեկելու և Լեռնային Ղարաբաղի հարցը լռության մատնել ստիպելու փորձեր, Բաքվում տիրող արտակարգ լարված դրության մասին խոսակցություններում փաստորեն թաքնված էին նոր սումգայիթների հնարավորության անքող ակնարկներ։ Նրանք հմտորեն օգտագործեցին նաև Ֆերգանայի դեպքերի ստեղծած մթնոլորտը։ Բայց չբավարարվելով այս ամենով, ինչպես տեղեկացնում է «Բակինսկի ռաբոչի» թերթը հունիսի 7-ի համարում, «Դեպուտատ Դադամյանի ելույթի կապակցությամբ Ադրբեջանի դեպուտատների խումբը հարցապնդում է արել ԽՍՀՄ գլխավոր դատախազի անունով, պատրաստվում է տեղեկանք համագումարի նախագահությանը ներկայացնելու համար, ծրագրվում է դեպուտատների մեր հանրապետության ներկայացուցիչների ելույթներ համագումարում և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդում»։

Միաժամանակ հակահայկական պառլամենտական արշավի համար Ադրբեջանում ժողովրդական պաշտպանության համապատկեր ստեղծելու միտումով «Բակինսկի ռաբոչին» սկսել է հրապարակել ընթերցողների թղթակցություններ ու նամակներ, որոնք աչքի են ընկնում հեղինակների ոչ միայն բացարձակ անիրազեկությամբ խնդրո առարկա հարցում, այլև անհարգալից վերաբերմունքով դեպի մեր ժողովուրդը և նրա դեպուտատները։ Նույն արատներով է տառապում թերթի հունիսի 10-ի համարում պատմաբան Դ. Գուլիևի հոդվածը։

Նամակագիրներից մեկին՝ «Յուժվնիիգեոֆիզիկայի» փորձարարական-մեթոդական ջոկատի ղեկավար Զ. Դուշչուրովին գայրացրել են Բ. Դադամյանի հետևյալ խոսքերը. «Այսօր Լեռնային Ղարաբաղից դուրս բնակվում են մոտ 300 հազար ղարաբաղցի հայեր, որոնք ստիպված հեռացել են այնտեղից»։ Եվ նամակագիրը գտնում է, որ Դադամյանը, գիտենալով «դաշինքի» անտեղյակությունը այդ հարցերում», որոշել էր անազնվորեն Լեռնային Ղարաբաղից արտագաղթած հայերին ներկայացնել իբրև փախստականների։ Դուշչուրովը գտնում է, որ շատ ղարաբաղցիներ 30-ական թվականներին աշխատում էին և աշխատում են Բաքվի արդյունաբերական ձեռնարկություններում, նավթահորերում, սպասարկման ոլորտում։ «Ոչ թե Հայաստան, որը 30-ական թվականներին արդյունաբերություն չուներ, ոչ այլ ռեգիոններ, այլ հենց Ադրբեջան են վերաբնակվել հայերը»,— գրում է նա գոհունակ իր հայտնագործությունից։ Սակայն դրանով էլ Զ. Դուշչուրովը հակասում է ինքն իրեն, քանի որ հենց Լեռնային Ղարաբաղի տնտեսական բարձիթող վիճակը, տասնամյակներ շարունակ նրա տնտեսական զարգացման հարցում Ադրբեջանի ղեկավարների հանցավոր ազգային-խտրական քաղաքականությունը, աշխատանք չլինելը, սոցիալ-տնտեսական անապահովվածությունը և ազգային մշակույթի զարգացման դեմ հարուցված արգելքները Ղարաբաղի հայերին ստիպել են լքել հայրենի հողը և գնալ վաստակ ու ազատություն փնտրելու։ Իհարկե, այդ հարկադրական արտագաղթը Ադրբեջանի ղեկավարներին թույլ էր տալիս հայաթափ անել Արցախը։ Ինչ խոսք, նրանց ավելի ձեռնտու էր, որ Լեռնային Ղարաբաղում համախմբված ապրող հայերի զանգվածները հեռանան իրենց պատմական հայրենիքից, թեկուզ մասամբ Բաքու տեղափոխվելու գնով, որպեսզի ապահովեին Ադրբեջանի զարգացող արդյունաբերությունը որակյալ բանվորներով ու ինժեներատեխնիկական կադրերով, իսկ սպասարկման ոլորտը՝ հմուտ արհեստավորներով ու ձեռներեց տնտեսվարներով։ Մյուս կողմից, տարածվելով երկրով մեկ, նրանք կփոշիանային ու կձուլվեին, որովհետև հայերը Ղարաբաղից արտագաղթել են ոչ միայն Բաքու, հակառակ Դուշչուրովի, նաև Հայաստան, այլև Միջին Ասիա, Հյուսիսային Կովկաս, Կենտրոնական Ռուսաստան, հատկապես Մոսկվա և այլ վայրեր։ Այսպես Նախիջևանը հայերից դատարկելու փորձված քաղաքականությունը կրկնվում էր Լեռնային Ղարաբաղում։ Խնդիրը Բաքվում աշխատանք գտնելը չէ, որը դատելով նամակի հեղինակների հնչերանգից, համարվում է հայերին արված շնորհ, բարեկամական քայլ, այլ հարկադրանքը, ամենից առաջ տնտեսական հարկադրանքը, որը ղարաբաղցիներին ստիպում էր լքել հայրենի տունը։

Դեռևս երկրամասում խորհրդային իշխանություն հաստատվելուց առաջ հայերը (և ոչ միայն հայերը) Ղարաբաղից և մերձակա շրջաններից գնում էին Բաքու (հաճախ ժամանակավորապես, առանց ծննդավայրի հետ կապերը խզելու) ապրուստի միջոցներ հայթայթելու համար՝ աշխատելով արագորեն զարգացող նավթարդյունաբերության մեջ։ Այլ կերպ ասած, դարձյալ տնտեսական հարկադրանքը ստիպում էր հեռանալ հայրենիքից։

Խորհրդային իշխանության հաստատումն այս տեսակետից ղարաբաղցիների կյանքում շրջադարձի չհասցրեց Ադրբեջանի մեկը մյուսին հաջորդած ղեկավարների ընդգծված ազգայնախտրական քաղաքականության պատճառով։ Ղարաբաղցիների հարկադրված արտագաղթը ոչ միայն չնվազեց, այլև ընդունեց ավելի մեծ չափեր, քան էր խորհրդային իշխանության հաստատումից առաջ։ Հետևաբար, եթե ստալինականության ժամանակ ազգային հարցի լուծումը վերածվել է սոցիալ-տնտեսական խնդիրների կատարման՝ ծայրամասերի ու կենտրոնի տնտեսական ու մշակութային մակարդակների մերձեցման կամ նույնիսկ համահարթման իմաստով, ապա ազգային հարցի լուծման մինչև իսկ այդ միակողմանի, սահմանափակ մոդելը բացառված է եղել ԼՂԻՄ-ի համար։

Խոսում են նաև Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանի (առաջին հերթին Դաշտային Ղարաբաղի) հետ ունեցած տնտեսական կապերի մասին, գործոն, որը իբր 1921 թ. ստիպեց մարզը թողնել Ադրբեջանի կազմում և ներկայումս անհնարին է դարձնում նրա վերամիավորումը Հայաստանին։ Մի կողմ թողնենք այն անվիճելի ճշմարտությունը, որ 1921 թ., ավերիչ պատերազմներից ու ընդհարումներից հետո (այդ թվում նաև ազգամիջյան հակասությունների հողի վրա) քայքայված և առանց այն էլ բնատնտեսությամբ ապրող տնտեսապես խիստ հետամնաց երկրամասում (Բաքուն բացառություն էր) ապրանքադրամային զարգացած հարաբերություններով պայմանավորված սերտ տնտեսական կապերի մասին խոսելն անհեթեթություն է։ Մի կողմ թողնենք այն ճշմարտությունը, որ ինչպես իրավամբ ընդգծեց Բ. Դադամյանն իր ելույթում, ԼՂԻՄ-ը վերածվել էր Ադրբեջանի հումքային կցորդի։ Հարցին մոտենանք սկզբունքորեն, ազգի ինքնորոշման իրավունքի տեսանկյունից։ Ամեն մի անեքսիա հետապնդում է առաջին հերթին տնտեսական նպատակներ և տասնամյակների ընթացքում անեքսիայի ենթարկվածի և ենթարկողի միջև անխուսափելիորեն հաստատվում են տնտեսական կապեր, [illegible], անիրավահավասար և խտրական, ինչպես Լեռնային Ղարաբաղի պարագայում։ Եթե սերտ տնտեսական կապերը ընդունենք հարցի լուծման եղանակ, ապա կհանգենք գաղութային ու կախյալ երկրների ազգային-ազատագրական պայքարի առաջադիմական բնույթը և անկախության հասնելու անհրաժեշտությունը ժխտելու տեսակետին, քանի որ այդ կապերն այն աստիճան խորացվել են տասնամյակների, հարյուրամյակների ընթացքում, որ այսօր էլ զգալի չափով պահպանվում են գաղութային լուծը թոթափած երկրներում՝ ծառայելով նեոգաղութատիրության երևույթին։ Մինչդեռ գաղութատիրության կործանումը մենք համարում ենք պատմության խոշորագույն երևույթներից մեկը։ Միաժամանակ ռեգիոնալ տնտեսավարկի պայմաններում տնտեսական կապերը և ինտեգրացիան սովորեն ազգային միավորումների միջև ոչ թե վերանում են, այլ ձեռք են բերում առողջ, կենսունակ բնույթ։

1921 թ., երբ Լեռնային Ղարաբաղը Կավբյուրոյի որոշմամբ ապօրինաբար հանձնեցին Ադրբեջանին, մարզի բնակչության գրեթե 95 տոկոսը հայեր էին։ Մինչդեռ 1988 թ., երբ բարձրացվեց ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու հարցը, հայերի թիվն այնտեղ արդեն իջել էր 74 տոկոսի։

Ի դեպ, «Բակինսկի ռաբոչիի» նույն համարում տպագրված մեկ այլ նամակում աշխարհագրական գիտությունների թեկնածուներ Է. Իբրահիմովան, Ա. Քերիմովը, Զ. Թաքլիևան և Ի. Արզումանը պնդում են, թե 1921 թ. ադրբեջանցիները կազմել են Լեռնային Ղարաբաղի բնակչության 90 տոկոսը։ Իբր որի համար էլ Կավբյուրոն փոխել է իր 1921 թ. հուլիսի 4-ի որոշումը՝ մարզը թողնելով Ադրբեջանի կազմում։ Ստին, որքան էլ այն վարպետորեն հյուսված լինի, միշտ պակասում է տրամաբանությունը։ Բայց բանը սոսկ տրամաբանությունը չէ։ Թվում է, թե աշխարհագրության մասնագետները լավ պետք է պատկերացնեն խորհրդային Միության վարչաքաղաքական բաժանման սկզբունքները, թեև հիշյալ գիտաշխատողները օդերևութաբաններ են։ Համենայն դեպս, ուսանողական տարիների ֆակուլտետային դասընթացներից նրանք պետք է գիտենային, որ 90 տոկոսով ադրբեջանցիներով բնակեցված հողատարածությունը չէր ստանա ինքնավար մարզի իրավունք ու իր սահմաններով չէր բաժանվի հանրապետության մնացած տարածքից։ Հայաստանի տարածքով Ադրբեջանից անջատ հայկական Նախիջևանի տարածքը կդարձնեին, անշուշտ, Ադրբեջանի շրջաններից մեկը, և ոչ թե ինքնավար հանրապետություն, եթե այն ադրբեջանական մարզ լիներ։ Մյուս կողմից եթե աշխարհագրագետները տեղյակ չեն, ապա պատմաբան Դ. Գուլիևը գիտի, որ Նախիջևանը Ադրբեջանին է ճանաչվել Թուրքիայի պահանջով և Խորհրդային Ռուսաստանի ու Թուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված «Բարեկամության և եղբայրության» պայմանագրով։ Համոզվելու համար ամենևին պետք չէր պրպտել արխիվները կամ փաստաթղթերի ժողովածուները։ Բավական է նայել խորհրդային արտաքին քաղաքականության վերաբերյալ համապատասխան գրքեր ու բառարաններ, թեկուզ «Դիվանագիտական բառարան» 1986 թ. հրատարակված 3-րդ հատորը, որի 313-րդ էջում հիշյալ պայմանագրին նվիրված հոդվածում գրված է, որ, համաձայն պայմանագրի, «Նախիջևանի մարզը կազմավորվում էր իբրև ինքնավար տարածք Ադրբեջանի հովանու ներքո»։ 1923 թ. փետրվարին այն դարձրին «Նախիջևանի ինքնավար երկրամաս», իսկ 1924 թ. փետրվարի 9-ից՝ Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Հանրապետություն Ադրբեջանական ԽՍՀ կազմում։

Մոսկվայի այդ պայմանագիրն էլ ընկավ նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում, ՌՍՖՍՀ-ի մասնակցությամբ, մի կողմից քեմալական Թուրքիայի, իսկ մյուս կողմից Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի միջև ստորագրված պայմանագրի հիմքում։ «Բարեկամության մասին» այս պայմանագրից շահեցին Ադրբեջանը (ստանալով Նախիջևանը), Վրաստանը (ստանալով Բաթումը), իսկ Հայաստանը Նախիջևանից բացի կորցրեց նաև Կարսի մարզը և Սուրմալուի գավառը։ Սակայն 1921 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրված Կարսի պայմանագիրը փաստորեն զուտ ձևական նշանակություն ուներ, որովհետև 1921 թ. սեպտեմբերի 22-ին Մոսկվայի պայմանագիրը արդեն ուժի մեջ էր մտել, այսինքն՝ գրեթե մեկ ամիս առաջ արդեն վերջնականապես վավերացվել էր և օրինականացվել այն, ինչը, չգիտես ինչու, պետք է նորից քննարկվեր Կարսում։

Ինչպես տեսնում ենք, Բ. Դադամյանը, որը գիտությունների թեկնածու չէ և առավել ևս պատմաբան չէ, իրավացի է։ Անկարող լինելով որևէ ծանրակշիռ բան հակադրել այս փաստերին ու փաստարկներին, ադրբեջանցի դեպուտատներից ոմանք (օրինակ, Զ. Քյազիմովան) անապացույց հայտարարում են, թե «տարածքային հավակնությունները» Նախիջևանի նկատմամբ «քաղաքականապես անգրագետ» են, թե ժողովրդական դեպուտատների համագումարը իրավասու չէ վերացնել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի մեջ մտցնելու Կավբյուրոյի որոշումը և այլն։ Դեպուտատ Ֆ. Ռզաևը տագնապով հայտարարում է «Բակինսկի ռաբոչիի» թղթակցին, թե «անիրավազոր» է ԼՂԻՄ-ում հանրաքվե անցկացնելու նախաձեռնությունը, «քանզի ԼՂԻՄ-ի հարցը Ադրբեջանական ԽՍՀ առանձնաշնորհն է և ոչ թե ինքնավար մարզի, իսկ գլխավորը, ԽՍՀՄ սահմանադրության մեջ հանրաքվեի համար օրենք գոյություն չունի։ Իսկ եթե այն անցկացվի, ապա պետք է անցկացվի ողջ Ադրբեջանի տարածքում, մեր հանրապետության բոլոր բնակիչների մասնակցությամբ»։ Նման դեպքերում ֆրանսիացիները բացականչում են «Օ՛, լյա-լյա»։ Բայց ասա թե որտեղ է անգրագիտությունը։ Նախ, դեպուտատ Ռզաևին, նաև Դ. Գուլիևին հիշեցնենք, որ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատը և պատմաբանը պարտավոր են գիտենալ սահմանադրությունը, որքան էլ այն լինի անկատար ու վիճելի, իսկ այդ սահմանադրության 5-րդ հոդվածում ասված է. «Պետական կյանքի առավել կարևոր հարցերը ճանաչվում են համաժողովրդական քննարկման, ինչպես նաև դրվում համաժողովրդական քվեարկության (հանրաքվեի)»։

Նա, ով հետևել է ժողովրդական դեպուտատների համագումարին, գիտե, որ ԼՂԻՄ-ում հանրաքվե անցկացնելու առաջարկ արեցին ոչ միայն Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանը և մյուս հայ դեպուտատները։

Գալով Լեռնային Ղարաբաղի հարցում հանրաքվեն ամբողջ Ադրբեջանի տարածքում անցկացնելու նրանց ցանկությանը, անհրաժեշտ է ասել, որ սա մեծապետական անհեթեթության գլուխգործոց է, քանզի այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը ասել է, որ «անջատման իրավունքը ենթադրում է, որ հարցը ոչ թե կենտրոնական պառլամենտի, այլ հենց միայն անջատվող մարզի պառլամենտի (սեյմի, հանրաքվեի և այլն) միջոցով պետք է լուծվի» (ԵԺ, հ. 25. էջ 381—382)։

Բ. Դադամյանն իրավացի է նաև Լեռնային Ղարաբաղի պատմական ճակատագրի հարցում՝ վկայակոչելով ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 4-ի որոշումը Լեռնային Ղարաբաղը՝ հայոց հնագույն Արցախ նահանգի մի մասը, խորհրդային Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին, որը, սակայն, հաջորդ օրը, Ստալինի ճնշմամբ, փոխվեց և որոշվեց մարզը հանձնել Ադրբեջանին։

Սա է ճշմարտությունը և ոչ թե այն, ինչ գրում է Դուշչուրովը, պնդելով, թե մենք, խոսելով ԼՂԻՄ-ի ստեղծման գործում Ստալինի թելադրանքի մասին, երբ գլխավոր քարտուղարը դեռևս չէր հասցրել իր ձեռքում կուտակել անբաժան իշխանություն, միանգամայն մոռանում ենք, որ 1921 թ. Լեռնային Ղարաբաղի բնակչությունը միանշանակ հանդես է եկել Ադրբեջանի կազմում ինքնավարություն ստեղծելու օգտին։ Ըստ որում, նրա կարծիքով, դա եղել է մարզի ադրբեջանցի բնակչության կողմից «բարեկամության» դրսևորում հայերի հանդեպ, թեպետ հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղում երբեք հանրաքվե չի անցկացվել և մարզային ինքնավարությունը պարտադրվել է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը Կավբյուրոյի կողմից։

Բ. Դադամյանը ամեն ինչ ասաց ճիշտ և տեղին, թեև ժամանակի սղությունը նրան թույլ չտվեց պատմել ամբողջ ճշմարտությունը Սումգայիթի եղեռնագործության մասին։ Եվ դաշինքը բուռն ծափահարություններով փոխհատուցեց նրա ազգային ու քաղաքացիական արդարամտությունը, թեև Ա. Նամազովան չարախնդորեն նկատում է, թե իբր Դադամյանին «բոլորից երկար և նույնիսկ հոտընկայս ծափահարել է միայն ակադեմիկոս Սախարովը»։ Բայց մի՞թե դա նսեմացնող չափանիշ է։

Թերթի մեկ այլ ընթերցող՝ Վ. Յա. Բարչալը, ազգությամբ ռուս, բայց ծնված Բաքվում, որը չի կասկածում, թե ունի աչքեր, ականջներ և համարձակվում է հուսալ, որ նաև խելք, ուստի տեսնում է, լսում ու զգում, Հայաստանի դեպուտատների ելույթներում հիշյալ զգայարանների օգնությամբ հայտնաբերում է անհիմն հավակնությունների ուռճացում՝ հանուն անձնական ժողովրդականության։

«Ինչքան կրքեր և հույզեր պատվիրակների ելույթներում ԼՂԻՄ-ի և «բազմաչարչար հայ ժողովրդի» պրոբլեմի առթիվ։ Ագրեսիվության եզրերին հասնող հույզեր, այդպես է երևում կողքից»,— բացականչում է աչքերի, ականջների և խելքի սույն տիրուհին, որը պատրաստ է համաձայնել «բազմաչարչար»-ի հետ, բայց չի հասկանում, թե ինչպես այդքան դժվարին տառապանքներ կրած մարդիկ կարող են խուլ լինել ուրիշների տառապանքների, ավելի ճշգրիտ «165 հազար հայկական ադրբեջանցիների» տառապանքների հանդեպ, որոնք հեռացել են Հայաստանից։ Իսկ ինչո՞ւ Վ. Բարչալի զգայարաններն ու խելքը չեն օգնում վերհիշելու Սումգայիթը կամ հասկանալու, որ «հայկական ադրբեջանցիների» մեծ մասը Հայաստանից հեռացել է կամովին։ Իսկ եթե եղել են նաև տեղահանության դեպքեր, ապա միայն իբրև պատասխան Բաքվից, Սումգայիթից, Կիրովաբադից, Շամխորից և այլ վայրերից բռնությամբ վտարված կամ մազապուրծ փախած 200 հազար հայերի տեղահանության դիմաց, տեղահանություն, որն ուղեկցվել է սպանություններով, [illegible], թալանով։ Հազիվ թե Վերա Յակովլևնան տեղյակ չէ, որ մինչև իսկ Սումգայիթի դժոխքից հետո ոչ մի «հայկական ադրբեջանցու» քիթ իսկ չարյունվեց, և տեղահանության դեպքերը համբերության լցված բաժակի պռունկներից թափված ջուր էր, որի դառնությունը ոչ ոք այնքան լավ չի պատկերացնում, որքան իր հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից թուրք ջարդարարների կողմից բռնի տեղահանության և ցեղասպանության ենթարկված հայ ժողովուրդը։

Չի կարելի առանց նողկանքի կարդալ նաև ստալինականության սարսափելի ժամանակներին վայել այն միտքը, թե ղարաբաղյան հարցը բարձրացնողները կոչում են ոչ թե վերակառուցման առողջ ուժերի համախմբմանը, այլ տարաժանմանը, «սոցիալիզմը ազգային բնակարանները քաշել-տանելուն», նպաստելով ոչ թե սոցիալիզմի ամրապնդմանը, այլ թուլացմանը։ Ստացվում է, որ սոցիալիզմը կամրապնդվի և վերակառուցման առողջ ուժերը կհամախմբվեն, եթե առանձին արտոնյալ ազգեր սոցիալիզմը տանեն իրենց բնակարանները, իշխեն այլ ազգերի տարածքի ու իրավունքների վրա։ Եվ սա՛ կոչվում է ինտերնացիոնալիզմ։ Կարծում եմ, որ առաջին անգամը չէ, որ մեզանից պահանջում են ինտերնացիոնալիստ լինելու համար ուրիշներին զիջել մեր տունը, հողը, մշակույթը, մոռանալ մեր ազգային արժանապատվությունը։ Չափից ավելի չե՞ն արդյոք չարաշահում մեր «բարյացակամները» հայ ժողովրդի համբերությունը և քաղաքակիրթ խառնվածքը։

Իհարկե, «Բակինսկի ռաբոչիի» նամակագիրները, երկրորդելով ադրբեջանցի դեպուտատներին, երեսպաշտորեն շաղակրատում են ժողովուրդների բարեկամության, եղբայրության, ինտերնացիոնալիզմի օգտին, քարոզներ կարդում մեզ։ Անտարակույս, շատ հեշտ է ինտերնացիոնալիզմ խաղալ ուրիշի հաշվին։ Բ. Դադամյանը միանգամայն տեղին մեջբերեց Կովկասյան բյուրոյի՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու պատճառաբանությունը «... Ելնելով հայերի ու մուսուլմանների միջև ազգային հաշտության անհրաժեշտությունից...»։ Միթե՞ պարզ չէ, որ երբ կողմերից մեկը «ազգային հաշտության» համաձայնություն տալու համար մյուսից պահանջում է հողային զիջումներ, ապա դա ինտերնացիոնալիզմ չէ, այլ անեքսիա։

Ասում են, թե իբր հայ դեպուտատները ձգտում էին ժողովրդական դեպուտատների համագումարը շեղել իր գլխավոր ուղղից, երկրի առջև կանգնած անհետաձգելի խնդիրներից։ Սակայն շատ ու շատ դեպուտատների կարծիքով, ազգամիջյան հարաբերությունների հարցը, այդ թվում և Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը ներկայումս երկրի առջև ծառացած ամենակարևոր ու բարդ հարցերից է։

Այդ հարցը պահանջում է անհապաղ, արդարացի և արմատական լուծում, քանզի ժողովուրդների բարեկամությունը, առանց որի ֆեդերալիզմը դառնում է պատրանքային, մեր օրերում ունի ըմբռնման միանգամայն այլ չափանիշներ և կարող է ամրապնդվել ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի հաղթանակով։

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
«Երեկոյան Երևանի»
քաղաքական մեկնաբան